Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 618 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԵԾԱՆՎԱՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակներն են աջակցել 9-ից 20 տարեկան երիտասարդներին, ովքեր ցանկանում են դառնալ «Նաիրի» հեծանվային ակումբի սան և զբաղվել հեծանվասպորտով, վերջիններիս տրամադրել անհրաժեշտ գույք, տարածք, հմտություններ և գիտելիքներ, նախապատրաստել ազգային և միջազգային մրցաշարերի համար, ներառյալ Օլիմպիական խաղերի, տարածել առողջ և ակտիվ ապրելակերպ, աջակցել ՀՀ-ում սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտում ծրագրերի իրականացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Նաիրի» հեծանվային ակումբ ոչ առևտրային կազմակերպություն<br>(843 Քամբեռլենդ ռոուդ, Գլենդեյլ, Կալիֆորնիա 91202, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Նաիրի» հեծանվային ակումբ հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, Չախափնյակ 10/2, Ջերմուկ, ՀՎՀՀ՝ 08917185): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | - Կոտայքի մարզ, ք. Աբովյան,<br>- Գեղարքունիքի մարզ, ք. Սևան<br>- ՀՀ, ք. Երևան<br>Ծրագիրն իրականացվում է սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 34,850,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Նաիրի» հեծանվային ակումբի սաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2022 թվականի հուլիսի 15-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները | Փուլ 1 \|\| 2022 թվականի հուլիսի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը<br>1. «Նաիրի» հեծանվային ակումբի մարզումների համար նախատեսված տարածքի վերանորոգման աշխատանքների իրականացում - 2,250,000 դրամ,<br>2. հեծանիվների, հեծանվային համազգեստների, սաղավարտների, մարզակոշիկների, մարզասարքերի, սկուտերների և այլ պարագաների ձեռք բերում կամ ներմուծում – 8,500,000 դրամ, |

| | | |
|---|---|---|
| | | 3. մարզասարքերի և այլ պարագաների ձեռք բերում կամ ներմուծում – 3,500,000 ՀՀ դրամ,<br>4. հեծանվի անիվների ձեռք բերում կամ ներմուծում – 1,125,000 դրամ:<br><br>Փուլ 2 \|\| 2023 թվականի հունվարի 1-ից – 2023 թվականի դեկտեմբերի 31-ը<br><br>1. հեծանիվների, հեծանվային համազգեստների, սաղավարտների, մարզակոշիկների, մարզասարքերի, սկուտերների և այլ պարագաների ձեռք բերում կամ ներմուծում – 8,500,000 դրամ,<br>2. մարզասարքերի նոր մասերի և այլ պարագաների նոր մասերի ձեռք բերում կամ ներմուծում – 4,600,000 դրամ,<br>3. բեռնափոխադրող մեքենայի և սկուտերների ձեռք բերում կամ ներմուծում – 3,000,000 դրամ,<br>4. հեծանվի անիվների ձեռք բերում կամ ներմուծում – 3,375,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հուլիս 2022 – Դեկտեմբեր 2023<br>1. «Նաիրի» հեծանվային ակումբի մարզումների համար նախատեսված տարածքի վերանորոգման աշխատանքներ - 2,250,000 դրամ,<br>2. հեծանիվների ձեռք բերում կամ ներմուծում – 11,000,000 դրամ,<br>3. հեծանվային մարզազգեստների, սաղավարտների և մարզակոշիկների ձեռք բերում կամ ներմուծում – 6,000,000 դրամ,<br>4. մարզասարքերի ձեռք բերում կամ ներմուծում – 8,100,000 դրամ,<br>5. Բեռնափոխադրող մեքենայի կամ սկուտերների ձեռք բերում և ներմուծում – 3,000,000 դրամ,<br>6. Հեծանվի անիվների ձեռք բերում կամ ներմուծում – 4,500,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, պետական տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>- ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկո-ղության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66 որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

31.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ